ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 13-Ա04

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի 08.08.2025թ. նիստի

ք.Երևան 08.08.2025թ.

Նիստին մասնակցում էին դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը (նիստի նախագահ), դիտորդ խորհրդի անդամներ Վահրամ Ապրեսյանը, Լևոն Պետրոսյանը, Խաչիկ Նազարյանը Գարիկ Մկրտչյանը, Խաչիկ Ղահրամանյանը, Վարազդատ Ասատրյանը, Գեղեցիկ Հովսեփյանը /նիստի քարտուղար/ և կարգապահական հանձնաժողովի նախագահ Արման Սարգսյանը :

Արձանագրվեց, որ ներկա են խորհրդի 7 /յոթ/ անդամներ, քվորումն ապահովված է, և դիտորդ խորհրդը իրավազոր է անցնել օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը:

Օրակարգում ընդգրկված հարցեր՝

1.«Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի վերաբերյալ «Յունիբանկ» ԲԲԸ-ի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 23.07.2025թ.-ին ներկայացված՝ 01.04.2025թ.-ի եզրակացության (կարգապահական վարույթը կարճելու մասին) քննարկում:

Արման Սարգսյանը ներկայացրեց հարցի մանրամասները, հայտնեց, որ կարգապահական հանձնաժողովը որոշել է կարգապահական վարույթը կարճել:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի 6 անդամները, քանի որ հարցը վերաբերվում էր Խաչատուր Ղահրամանյանին, վերջինս հարցի քննարկմանը չմասնակցեց:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց «Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի վերաբերյալ՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 23.07.2025թ.-ին ներկայացված՝ 01.04.2025թ.-ի եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելուն) հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☐ Կողմ / ☐ Դեմ	Չի մասնակցում
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 1. Հավանություն տալ «Մ ԸՆԴ Հ ԿՈՄ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի վերաբերյալ «Յունիբանկ» ԲԲԸ-ի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 23.07.2025թ.-ին ներկայացված՝ 01.04.2025թ.-ի եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելու մասին) :

2. «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից «Կոլչեդան» ՊՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանի վերաբերյալ «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Արմենի Էլբակյանի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 23.07.2025թ.-ին ներկայացված՝ 11.06.2025թ.-ի եզրակացության քննարկում:

Արման Սարգսյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ կարգապահական հանձնաժողովը որոշել է կառավարչին տալ նախազգուշացում:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց «Կոլչեդան» ՊՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանի վերաբերյալ «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Արմենի Էլբակյանի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 23.07.2025թ.-ի ներկայացված՝ 11.06.2025թ-ի եզրակացությանը (կարգապահական տույժ՝ նախազգուշացում) հավանություն տալու մասին հարցը:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի նիստին ներկա բոլոր 7 անդամները:

Ուսումնասիրելով կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը, արձանագրվեց, որ կառավարիչ Գարիկ Յավրումյանի կողմից թույլ տրված խախտման էությունն այն է, որ վերջինս աճուրդ հայտարարելուց հետո հետևողական չի եղել իր կողմից կազմակերպված աճուրդին

մասնակցելու համար հայտեր ներկայացված լինել-չլինելու հանգամանքը պարզելու հարցում: Խորհուրդը գտնում է, որ աճուրդ կազմակերպող կառավարիչը պարտավոր է հայտերի առկայության հանգամանքը ճշտելու նպատակով կատարել գործողություններ, մասնավորապես՝ դատարանի գրասենյակից ճշտել հայտերի առկայության կամ բացակայության հարցը, ինչը սույն դեպքում չի կատարվել, և դրա արդյունքում անբարենպաստ հետևանքներ են առաջացել այլ անձանց համար: Խորհուրդը գտնում է, որ նման իրավիճակում կառավարչի կողմից թույլ տրված խախտումը բացասական է անդրադառնում կառավարիչների վարկանիշի վրա, ինչը հաշվի առնելով անհրաժեշտ է կիրառել առավել խիստ պատասխանատվության միջոց, սակայն հաշվի առնելով այն, որ տվյալ դեպքում կառավարիչը չունի այլ կարգապահական խախտումներ (տույժեր), դիտորդ խորհուրդը գտնում է, որ Գարիկ Յավրումյանի նկատմամբ պետք է կիրառել կարգապահան տույժ՝ նկատողություն:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց «Կոլչեդան» ՊՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանին կարգապահական տույժ՝ նկատողություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / □ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / □ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / □ Դեմ	

Որոշում 2. «Կոլչեդան» ՊՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3.«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից Ելենա Զորկինի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալանի վերաբերյալ Սեդա Ծառուկյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 23.07.2025թ.-ին ներկայացված՝ 08.04.2025թ.-ի եզրակացության քննարկում:

Արման Սարգսյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ կարգապահական հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր 7 անդամները:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց Ելենա Զորկինի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալյանի վերաբերյալ՝ Սեդա Ծառուկյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 23.07.2025թ.-ին ներկայացված՝ 08.04.2025թ.-ի եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելուն) հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / □ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / □ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / □ Դեմ	

Որոշում 3. Հավանություն տալ Ելենա Զորկինի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալյանի վերաբերյալ Սեդա Ծառուկյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 23.07.2025թ.-ին ներկայացված՝ 08.04.2025թ.-ի եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելու մասին) :

4. Սկսնակ և քիչ գործ ունեցող կառավարիչներին աջակցելու նպատակով 2025թ. վեց ամիսների /հուլիս-դեկտեմբեր/ համար հաշվապահական ծառայության արժեքի 50 տոկոսը «ՍԳԿԿ» ԻԿ-ի կողմից վճարելու հարցի քննարկում:

Դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ ԱԱՀ-ով հարկումը կառավարիչների համար նորություն է, և ինքը պայմանավորվածություն է ձեռք բերել հաշվապահական ծառայություն մատուցող կազմակերպության հետ՝ մինչև 2025թ. տարեվերջ կառավարիչներին զեղչված գներով հաշվապահական ծառայություն մատուցելու վերաբերյալ: Հավելեց, որ քիչ գործ ունեցող կառավարիչներին էական օգնություն կլինի վճարի մի մասը «ՍԳԿԿ» ԻԿ-ի միջոցներով փոխատուցելը:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի մյուս 6 անդամները:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց սկսնակ և քիչ գործ ունեցող կառավարիչներին աջակցելու նպատակով 2025թ. վեց ամիսների /հուլիս-դեկտեմբեր/ համար հաշվապահական ծառայության արժեքի 50 տոկոսը «ՍԳԿԿ» ԻԿ-ի կողմից վճարելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 4. Սկսնակ և քիչ գործ ունեցող կառավարիչներին աջակցելու նպատակով 2025թ. վեց ամիսների /հուլիս-դեկտեմբեր/ համար հաշվապահական ծառայության արժեքի 50 տոկոսը վճարել «ՍԳԿԿ» ԻԿ-ի միջոցներից:

Նիստի նախագահ՝ Տիգրան Սահակյան

Նիստի քարտուղար՝ Գեղեցիկ Հովսեփյան